ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի ծննդյան 95-ամյակի առթիվ)

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2005 թ. նոյեմբերի 25-ին լրացավ ականավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադիր և շուրջ 40 տարի նրա անփոփոխ գլխավոր խմբագիր Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի ծննդյան 95 տարին, գիտնական, որը հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության արգիական հիմնահարցերին նվիրված մեծարժեք աշխատություններով հարստացրել է պատմական գիտությունը:

Մ. Ներսիսյանը ծնվել է 1910 թ. Երևանի Նահանգի Աշտարակի օկրուգի Փարպի գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, այնուհետև ուսումը շարունակել Երևանի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1927-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1931-ին: Դեռևս 1930-ական թվականներին երիտասարդ պատմաբանը հրապարակել է մի շարք աշխատություններ նվիրված Հայաստանում և Անդրկովկասում հեղափոխական շարժումների պատմությանը: Այդ շրջանում նա հոդվածներ ու գրքեր է հրատարակել Ստեփան Շահումյանի, Բաքվի կոմունայի, Մայիսյան ապստամբության, 1918–1920 թթ. Հայաստանի տնտեսական և քաղաքական գրության և այլ հիմնահարցերի մասին: Մ. Ներսիսյանը պրոֆեսոր Կարո Ղազարյանի հետ կազմեց «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում» փաստաթղթերի արժեքավոր ժողովածուն, որը լույս տեսավ 1932-ին: Երկրորդ ժողովածուն, որը կազմվեց Մ. Ներսիսյանի ակտիվ մասնակցությամբ, հրատարակվեց 1935-ին՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի առաջաբանով, նվիրված է Հայաստանում առաջին «Սպարտակ» կոմունիստական երիտասարդական միության պատմությանը:

1937-ին Մ. Ներսիսյանը պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա՝ «Նարոդնիկական կազմակերպությունները Անդրկովկասում 1870–1880-ական թվականներին» թեմայով: Այդ հետաքրքիր ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1940-ին, նոր և կարևոր խոսք էր պատմագրության մեջ:

Հայրենական Մեծ պատերազմի առաջին իսկ օրերին Մ. Ներսիսյանը կամավոր մեկնում է ռազմաճակատ և արիաբար կռվում ֆաշիստական դավթիչների դեմ: Ծանր վիրավորվելով՝ նա վերադառնում է Երևան և որոշ ժամանակ անց վերստին ձեռնամուխ լինում պատմության կարևորագույն հիմնահարցերի մշակմանը:

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի գիտական հետաքրքրությունների գլխավոր առարկաներն էին XVIII–XIX դարերի ռուս-հայկական և ռուս-կովկասյան քաղաքական կապերի, ինչպես նաև XIX դարի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանում XX դարասկզբի հեղափոխական շարժման պատմության հիմնահարցերը:

Նշված հիմնահարցերի ուսումնասիրման բնագավառում Մ. Ներսիսյանն աշխատեց շուրջ կես դար: Դեռևս 1944-ին լույս տեսավ նրա «Ա. Սուվորովը և ռուս-հայկական հարաբերությունները 1770–1790-ական թթ.» աշխատությունը, որը հետագայում՝ 1981-ին, էական լրացումներով հրատարակվեց ռուսերեն: 1956–1961 թթ. ռուսերեն լեզվով հրատարակվեց նրա կազմած «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» հոդվածների երկհատոր ժողովածուն, որում քննարկվում են XVIII–XIX դարերի ռուս-հայկական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր:

1958-ին հրատարակված «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատության մեջ, որի ռուսերեն տարբերակը լույս տեսավ 1975-ին, հեղինակը, օգտագործելով հարուստ արխիվային նյութ, պարզում է Կովկաս աքսորված դեկաբրիստների թվաքանակը, ցույց տալիս նրանց ակտիվ մասնակցությունը 1826–1828 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին, այդ հեղափոխականների դերը պարսիկ խանների ու բեկերի ծանր լծից Արևելյան Հայաստանի ազատագրման գործում:

Արժեքավոր գիտական ուսումնասիրություն է Մ. Ներսիսյանի «1812 թվականի Հայրենական պատերազմը և Կովկասի ժողովուրդները» աշխատությունը, որը լույս տեսավ 1965-ին՝ ռուսերեն լեզվով: Նրանում պատմական նոր փաստերի ու հարուստ նյութի հիման վրա ցույց է տրված Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, Կովկասի լեռնականների, Կուբանի կազակների, կալմիկների մասնակցությունը ռուս ժողովրդի 1812 թ. Հայրենական պատերազմին և Թուրքիայի, Իրանի, Ֆրանսիայի, Անգլիայի կառավարող շրջանների հակառուսական զավթողական քաղաքականության ձախողումը Կովկասում:

1946-ին Մ. Ներսիսյանը պաշտպանեց դոկտորական դիսերտացիա՝ «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870-ական թվականներին» թեմայով: Այդ գիտական ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1955-ին, աչքի է ընկնում հիմնահարցերի խոր, բազմակողմանի վերլուծությամբ, մտքերի ու եզրակացությունների նորությամբ և համարձակությամբ: Աշխատության մեջ փաստական

հարուստ նյութի հիման վրա հեղինակը ցույց է տալիս արևմտահայերի ծանր վիճակը 1850–1880-ական թվականներին, շարադրում նրանց հերոսական պայքարը, ազատագրական պայքարի ընթացքը, բացահայտում այդ շարժման կապերը հարևան ժողովուրդների հակասուլթանական ապստամբությունների հետ, հայ ազատագրական պայքարի սոցիալ-դասակարգային բովանդակությունը և շարժիչ ուժերը, արևմտյան տերությունների հակահայկական, ռեակցիոն դիրքորոշումը, հայ ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը և այլն: Հիմնարար այդ աշխատության մեջ Մ. Ներսիսյանը ճշմարտացի դիրքերից լուսաբանեց մեր ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի պատմության հանգուցային շատ հարցեր, այդ թվում նաև Ռ. Պատկանյանի, Ռաֆֆու, Գ. Արծրունու, Գ. Սրվանձտյանի և անցյալի նշանավոր այլ գործիչների առաջադիմական-դեմոկրատական գաղափարների գնահատման հարցերը: Հաստատապես կարելի է նշել, որ պատմաբանի այդ աշխատությունը համարձակ քայլ էր՝ ուղղված հիմնահարցի շուրջ ժամանակին ստեղծված քարացած, դոգմատիկ «տեսությունների» դեմ, որոնք դեռևս հաղթահարված չէին:

Մ. Ներսիսյանի մենագրությունը արժանիորեն բարձր գնահատական ստացավ ինչպես հանրապետական, այնպես էլ կենտրոնական մամուլում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», «Վոպրոսի իստորիի», «Սովետսկոյե վոստոկովեդենիե» և այլն) և հիմք դրեց արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի դիտական ուսումնասիրմանը խորհրդային պատմագրության մեջ: Հետագայում այդ հիմնահարցին անդրադարձան Մ. Ներսիսյանի ղեկավարությամբ աշխատող երիտասարդ մի շարք գիտնականներ ու պատմաբաններ:

1965 թ. հրատարակվեց Մ. Ներսիսյանի «Ժողովրդական հերոսը» հոդվածը, որտեղ խորհրդահայ պատմագրության մեջ առաջին անգամ ներկայացվեց մեծ հայրենասեր, անվեհեր պարտիզան-հայդուկ և տաղանդավոր զորավար Անդրանիկի պայծառ կերպարը, տրվեց նրա հերոսական կյանքի ճշմարտացի բնութագիրը: «Հայ ժողովրդի ազգային հերոսը,– ասված է հոդվածում,– շուրջ 30 տարի անընդմեջ պայքարեց սուլթանական արյունոտ բռնապետության դեմ, կազմակերպեց ու ղեկավարեց արևմտահայ գյուղացիության պաշտպանողական ազատագրական կռիվները՝ անփոփոխ կերպով դրսևորելով անօրինակ քաջություն և ռազմական հնարամտություն» («Սովետական Հայաստան», 25. II. 1965):

Ակադեմիկոս Մ. Ներսիսյանի նախաձեռնությամբ ու խմբագրությամբ 1966 թ. ռուսերեն լեզվով լույս տեսավ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում» հիմնարար ու բարձրարժեք փաստաթղթերի ժողովածուն, որտեղ հանգամանորեն ցույց է տրված սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի մասսայական կոտորածների արյունոտ քաղաքականությունն արևմտահայության նկատմամբ: Ժողովածուն բովանդակում է արխիվային բազմաթիվ նոր փաստաթղթեր, պաշտոնական կարևոր նյութեր և, ամենից առաջ, տարբեր պետությունների դեսպանների, արտգործնախարարների և քաղաքական այլ գործիչների գաղտնի զեկուցագրեր, ականատեսների, այդ թվում հայերի, արաբների, թուրքերի, ինչպես նաև եվրոպական միսիոներների վկայություններ:

ժողովածուն նոր լրացումներով, ռուսերեն լեզվով վերահրատարակվեց 1982-ին և լայն արձագանք գտավ ընթերցողների շրջանում, իսկ 1991-ին այն լույս տեսավ հայերեն: Իր արտակարգ հարուստ ու բազմազան նյութերով՝ քաղված տարբեր աղբյուրներից (անգլիական, գերմանական, ֆրանսիական, ռուսական, իսպանական, թուրքական, արաբական, հայկական և այլն), հայերի ցեղասպանությանը նվիրված այդ գիրքը արևմտահայերի մեծ ողբերգության նշանակալից գրավոր հուշարձան է:

Մ. Ներսիսյանը արժեքավոր մի շարք հոդվածներ է նվիրել հայոց պատմության սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնահարցերին, ինչպես նաև XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի հասարակական գործիչներին ու հայ մշակույթի խոշոր ներկայացուցիչներին: Դրանցից հատկապես պետք է հիշատակել այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են «Ա. Վ. Սուվորովի հայ վինակիցներն ու բարեկամները», «Արովյանի առաջին հրապարակային ելույթը», «Առաջին հայ սոցիալիստ-ուտոպիստը (Դ. Դ. Ախշարումով)», «Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 1860–80-ական թթ.», «Արևմտահայերի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ և արևմտյան տերությունները», «Պրոֆեսոր Լեոյի պատմագիտական ժառանգությունը» և այլն: Մ. Ներսիսյանի աշխատություններն առանձնանում են ինքնատիպությամբ, գիտական խորությամբ, հիմնահարցերի կարևորությամբ ու արդիականությամբ, եզրահանգումների ճշմարտացիությամբ: Դրանք լույս են սփռում մեր ժողովրդի պատմության բազմաթիվ կնճռոտ հարցերի վրա:

1998 թ. լույս տեսավ ակադեմիկոս Մ. Ներսիսյանի «Պատմության կեղծարարները» աշխատությունը, ուր զետեղված են անվանի պատմաբանի վերջին տասնամյակում գրված պատմագիտական մի շարք հոդվածներն ու գիտական հաղորդումները:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի հայտնաբերման ու հրատարակման բնագավառում պրպտումները Մ. Ներսիսյանը շարունակեց նաև հետխորհրդային ժամանակաշրջանում: Այդ գործունեության հանրագումարը եղավ նրա նոր աշխատությունը՝ «Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր» խորագրով, որը լույս ընծայվեց բազմավաստակ գիտնականի մահից հետո (2005 թ.):

Գիտահետազոտական տքնաջան գործունեությանը զուգահեռ Մ. Ներսիսյանը ներդրում ունի նաև մանկավարժական աշխատանքում. մի քանի տարի գլխավորել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը, դասավանդել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, եղել շատ ասպիրանտների ու դոկտորանտների գիտական ղեկավարը: Նրա խմբագրությամբ 1972 թ. լույս տեսավ «Հայ ժողովրդի պատմությունն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» մեծարժեք դասագիրքը, իսկ 1980 թ. լույս տեսավ դրա ռուսերեն տարբերակը: Նա մասնակցել է նաև ուրիշ դասագրքերի ստեղծմանը:

Ականավոր գիտնականը միաժամանակ եղել է գիտության խոշոր կազմակերպիչ, աշխատել է որպես հանրապետության գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի տնօրեն, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, փոխպրեզիդենտ, Ակա-

դեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահ, ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագիր: Շուրջ 30 տարի եղել է Ակադեմիայի նախագահության անդամ:

Մ. Ներսիսյանի ջանքերով Ակադեմիայում ստեղծվեց արևելագիտության բաժինը, որը հետագայում վերածվեց ինստիտուտի:

1958-ին Ակադեմիայում Մ. Ներսիսյանը հիմնադրեց «Պատմա-բանասիրական հանդեսը» և, ինչպես վերը նշվեց, շուրջ 40 տարի եղավ նրա անփոփոխ գլխավոր խմբագիրը: Նրա ջանքերի շնորհիվ հանդեսը ձեռք բերեց համամիութենական ու համաշխարհային գիտական մեծ համարում:

1966–1967 թթ. Մ. Ներսիսյանը Երևանի պետական համալսարանի ռեկտորն էր: Նրա նախաձեռնությամբ ստեղծվեցին արևելագիտության ֆակուլտետը, հայագիտական կենտրոնը, հիմնադրվեցին «Բանբեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» պարբերականները:

Մ. Ներսիսյանը ԽՄԿԿ անդամ էր 1938-ից: Երկար տարիներ եղել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, ընտրվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երեք գումարումների (1966–1979 թթ.) և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Նա նաև գիտական և խմբագրական-հրատարակչական մի շարք խորհուրդների ու հանձնախմբերի անդամ էր:

Մ. Ներսիսյանը պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային Կարմիր դրոշի, Ժողովուրդների բարեկամության շքանշաններով ու բազմաթիվ մեդալներով, այդ թվում բուլղարական «Գեորգի Դիմիտրով» մեդալով: «Մովսես Խորենացի» առաջին մեդալը շնորհվել է Մ. Ներսիսյանին:

Իբրև մեր խոսքի ամփոփում ներկայացնենք ակադեմիկոսի անձնական արխիվում պահպանվող երեք փաստաթուղթ, որոնք լավագույնս բնութագրում են Մ. Ներսիսյանին որպես գիտնական և մարդ: Գրանցից առաջինը Վիկտոր Համազասպի Համբարձումյանի նամակն է՝ հասցեագրված պատմաբանին, նրա ծննդյան 85-ամյակի առթիվ.

«Մեծարգո Մկրտիչ Գեղամի.

Մենք բոլորս լավ հիշում ենք, որ այս օրերին լրանում է Ձեր ծննդյան 85-ամյակը և շտապում ենք այդ առթիվ շնորհավորել Ձեզ: Կյանքի դժվարին պահերին շատ կարևոր էր պաշտպանել ճշմարտությունը, նույնիսկ բարձրաձայն արտահայտել այն, դա Դուք դրսևորեցիք գործի նկատմամբ ազնվադույն վերաբերմունքով, և մենք բոլորս, ովքեր դիտեն Ձեր սերը ճշմարտության նկատմամբ և Ձեր համարձակությունը, այսօր բերում ենք Ձեր անունը իբրև հասարակական գործչի և պատմաբանի օրինակ:

Իրոք, Հայաստանում հնարավոր չէ լինել լավ պատմաբան և չլինել նշանավոր հասարակական գործիչ:

Ցանկանում եմ երկար տարիների կյանք, հաղթահարել սոսկ պայմանական հարյուրամյա սահմանադիծը և դիտական նոր հաջողությունների հետ միասին ուրախանալ հաջողություններով անձնական կյանքում:

Չնայած առանձին մարդկանց մաղթանքներին սովորաբար ուշադրություն չեն դարձնում, մեր մաղթանքները, այսինքն 90 կամ 100 տարիներին մոտեցողներինը, կարող են ունենալ որոշակի նշանակություն:

Այդ պատճառով ապրեցեք երկար և հաջողությամբ աշխատեք: Դա մեր լավագույն մաղթանքն է յուրաքանչյուր լուրջ և ազնիվ գիտնականին:

Այժմ ես քիչ եմ լինում Երևանում, սակայն մենք, անտարակույս, կհանդիպենք և կփոխանակենք կյանքից ստացած մեր նոր տպավորությունները:

Առողջություն, առողջություն և արգասավոր գործունեություն:

12 նոյեմբերի, 1995 թ. Վիկտոր Համբարձումյան»:

Մ. Ներսիսյանի մասին ԵՊՀ երկարամյա պրոռեկտոր, պրոֆեսոր Սեմյոն Տիգրանի Հախումյանն իր «Խոհեր անցյալի մասին» (Երևան, 2002) գրքում գրում է.

«Նա մեր հանրապետության հասարակական գիտության այն ներկայացուցիչներից էր, որին ամենայն իրավամբ կարելի է դասել հայ գիտնականների փայլուն համաստեղության արժանավոր աշակերտների և ավանդույթները շարունակողների թվին, գիտության այնպիսի կորիֆեյների, ինչպիսիք են Հակոբ Մանանդյանը, Մանուկ Աբեղյանը, Հովսեփ Օրբելին, Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանը:

70 տարիների ընթացքում նա հանգիսանում էր հայ գիտական մտքի ակտիվ գործիչներից մեկը՝ մեծ ավանդ ներդնելով պատմական գիտության մեջ, հատկապես լուսաբանելով հարազատ ժողովրդի պատմության զարգացման գլխավոր փուլերը:

Նրա հետ աշխատելը հեշտ էր և, միաժամանակ, բավականաչափ դժվար ու բարդ: Հեշտ էր, որովհետև՝ նա իր էությամբ բացառիկ ազնիվ և օրինավոր մարդ էր: Նրա մեջ տարօրինակ կերպով համատեղվում էին ինչ-որ, ես կասեի՝ մանկական պարզամտություն ու անմիջականություն, կենցաղային տարաբնույթ հանգամանքներին պրակտիկ՝ անհարմարվողականության գծեր և, միաժամանակ՝ զարմանալի իմաստություն, որն, ըստ երևույթին, գալիս էր հայրենի երկրի խորքերը գնացող նրա տոհմաբանական արմատներից»:

Այս կապակցությամբ արժե, թերևս, նշել, որ մայրական գծով Մ. Ներսիսյանի պապը՝ քահանա Տեր Գևորգ Հայրապետյանը, հերոսաբար կռվել է Բաշ-Ապարանի ճակատամարտում, և նրա ցուցաբերած խիզախության մասին գրվել է ժամանակի մամուլում:

Իսկ ահա թե ինչ է գրում ռուս ականավոր պատմաբան, ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինան՝ «Դեկաբրիստները Հայաստանում» գրքի ռուսերեն հրատարակության առթիվ.

«Մեծարգո Մկրտիչ Գեղամովիչ.

Սրտանց շնորհակալ եմ Ձեզանից՝ հրաշալի նվերի՝ «Դեկաբրիստները Հայաստանում» հիանալի գրքի համար, որը բազմակողմանիորեն լուսաբանում է տվյալ թեման: Այդ գրքի անհրաժեշտությունը շատ էր՝ մեծ: Շնորհավորում եմ Ձեզ՝ նրա լույս ընծայման առթիվ: Ողջույն: Մ. Նեչկինա, 19 փետրվարի, 1976 թ.»: